

ՀԱՂՈՐԴՈՒԹՅՈՒՆԵՐ ԵՎ ՀՐԱՊԵՐԱԿՈՒԹՅՈՒՆԵՐ

Վ. Հակոբյան

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ՔԱՂԱՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ուկրաինայում հայերը համեմատաբար հոծ զանգվածներով սկսել են ապրել 13—14-րդ դարերից: 14-րդ դարի երկրորդ կեսից արդեն այստեղ գոյություն ունեն հայկական եկեղեցու եպիսկոպոսական թեմ:

Ուկրաինայի տարբեր քաղաքներում ապրած և գործած հայ հեղինակները իրենց գրվածքներում հաղորդում են տեղեկություններ, ոչ միայն այդ քաղաքներում ապրող հայերի, այլև Ուկրաինայի առանձին քաղաքների, սրանց բնակչության ու այլևայլ եղելությունների մասին: Այդ տեղեկությունները սփռված են պատմագիտական տարբեր աղբյուրներում՝ հիշատակարաններում, օրագրություններում, ժամանակագրություններում, ճանապարհորդական նոթերում և առանձին աշխատություններում, որոնց մի մասը հրատարակված է, իսկ մյուս մասը ոչ: Դրանց մի փոքր մասն օգտագործվել է մեր «Армянские источники об Украине и украинцах» հոգվածում¹: Այս հոգվածը վերաբերում է միայն քաղաքներին և նրա հիմքում ընկած են նշված աղբյուրների տեղեկությունները, որոնք վերաբերում են 15-րդ դարից մինչև 19-րդ դարի առաջին քառորդին: Սակայն, դրանք առավելապես վերաբերում են 16—17-րդ դարերին: Նպատակ չունենք այստեղ խոսել այն վկայությունների մասին, որոնք վերաբերում են Ուկրաինայի տարբեր քաղաքներում ապրած հայերի գործունեությանը, մասնավորապես չինարարական աշխատանքներին, որոնք թեև վերաբերում են ուկրաինական քաղաքներին, համենայն դեպս հետաքրքրության առանձին առարկա կարող են դառնալ:

Մեզ հասած տեղեկությունները մի ղեպքում համառոտ, մի այլ ղեպքում ընդարձակ, վերաբերում են Օստրոկին, Յարոսլավին, Սնյատինին, Նովինային, Լուցին, Ստանիսլավին և այլն: Իսկ Կամենիցի և Լվովի մասին եղած տեղեկությունները բազմաթիվ են, բաղադրովանդակ և ամենից հետաքրքիր:

Այս երկույթը պետք է բացատրել նրանով, որ Կամենիցի և մասնավորապես Լվովը հանդիսանալով Ուկրաինայում ապրող հայերի տնտեսական, կուլտուրական, հոգևոր և որոշ առումով վարչական կենտրոն, այստեղի հայ գաղթավայրի մասին շատ է գրվել, իսկ այդ աղբյուրներում էլ մի շարք վկայություններ վերաբերում են Կամենիցին և Լվովին: Պետք է նշել նաև, որ վերջիններիս մասին հայ հեղինակները գրում են շերմությամբ, սիրով, որպես իրենց չայրենիքի 1631 թ. զրված մի բանաստեղծության մեջ հեղինակն ահա թե ինչ է ասում Կամենիցի մասին.

«Ո՛վ աստուածապահ քաղաքի մեծ Կամենիցի
Ի քառից կողմանց պատեալ յորդահոս վրտակից,
Անառիկ ամրոց շինեալ ի վերայ վիմի.
Որհնութիւն աստուածային ի բնդ ծաւալի»:

Տիրամայր ամենասուրբ Աստուածածին,
Բարեխոսեա Միածնի վասն այս քաղաքի»:

17-րդ դարի չեղինակ Սիմեոն Լեհացին, որը երկար ժամանակ ապրել ու գործել է Լվովում, Կամենիցի դիրքի մասին գրում է. «Անառիկ բերդն և յամրոցն Կամենից, որ ի վերայ

¹ Տ՛ես «Исторические связи и дружба украинского и армянского народов» ժողովածուում, Երևան, 1961, стр. 210—228.

² Ղ. Ալիշան, Կամենից, Վենետիկ, 1896, էջ 184:

քարայր լեռան³, իսկ Լվովը տակավին 14-րդ դարում համարվել է «Յակնաւոր, մեծ և զովելի» կամ «Յանուարի և յակնաւոր թաղաւորական և քրիստոնէական մայրաքաղաք»⁴։

Սիմեոն Լեւոնցին իր մի հիշատակարանում Լվով (ԼԼՎ) անունը ոտուզարանում է առաջադրել, իսկ Վարդան Հունանյանը 1684 թ. մի հիշատակարանում Լվովը կոչում է Լեւոնապատճ, տեղանվան հայկական պատ վերջավորութիւնով⁵։

Հայ հեղինակների նկարագրութիւնները մեզ Լվովը մեզ ներկայանում է աստուրական, արհեստագործական և կուլտուրական կյանքի խոշոր կենտրոն։ Ահա ինչպես է նկարագրում այն Սիմեոն Լեւոնցին. «Եւ քաղաքս այս է մարդաշատ, յոյժ բարելի և մրդաւտ։ Եւ ասին թէ՛ Զողաց աշխարհս այլ քաղաք չկայ սորա նման. և է թախտ։ Քաղցիքն պերճ և փարթաւ՝ պղզեստանն և խանութինն բարեօք լի. և ամենայն ինչ առատ. և զինչ ուզես՝ Լով գտանես։ Ունի բաղում և ազգ և ազգ փէշաքարնի և արուեստաւորք՝ ոսկերիչք, զարնիշանչիք, զալմաքերնի, քարադորձք, քարակոփք և ի վերայ մարմարի քանդողք և այլք։ Վասն որոյ ամենայն աշխարհաց, դաւառաց զան անտ, զորս գտանեն հազիր և զորս բանել տան։ Նոյնպէս հեծելադօրք և զինուորք, իշխանք, պարունայք զան և անդ զնկն զէն, զրէհ, սաղաւարտ, ճէպա, մղախ, զեղարդ, թուֆաք, թօր, նետ, աղեղ, ասպար, թուր, նաճախ, պալթայ, խալխա և այլն, որ ինչ պէտք է պատերազմողաց, աստի տանին։ Թէն ճի (100.000) զինուոր դայ՝ գտանէ զոր ինչ և կամի, զի մեծ շահրիստան է։ Ունի և խաֆղանճիք, հօրխանճիք, զախդիանճիք, պօյաճիք, խաւչիք, շէմպէլիք և ազգ և ազգ քուլհակք, շատրճիք և այլն, պասմաճիք, ոսկի հայդք, ոսկի ձեծողք նաղաշաց։ Այլ և պատկերադորձք, նկարագիրք, պատկերահանք, պասմազիրք հանողք Լիհաց, Ըգդաց և Հայոց։ ...Ունի իրեք տակ պարսպ սրիս պրշերով. և ամէն պուրճն թօրեք։ Եւ կայ բարձր վիմաշէն սահաթի տուն, որ կոչի Ռաթուշ, որ ունի մեծ սահաթ վերին, և ամէն սահաթի փող հարկանեն, ուր և դատարան է Լեւոնց և Հայոցն։ Կան եկեղեցիք և քաղթօրնի, որ են վանք, արանց և կանանց՝ մեծամեծ և վիմաշէն, ոտանց դմբիթ⁶։

Ձեռագիր մի աշխատութիւն մեզ, որը մեր մի հոգիածում վերադրել ենք Գեորգ Դպիր Պալատցուն⁸, Լվովի մասին կարդում ենք. «Մայրաքաղաքն իւր է Լեւոպօլսն, հռչակաւոր է և համբաւուն վասն փարթաւ բաղաբին, որ կանգնի ի հրապարակն սրբուհւոյն Ակնէսի, միւս ևս զերանուն, որ կանգնի ի Վերափոխման հրապարակն, ուրանօք զան վաճառականքն Պարսից ի Կոստանդնուպօլսոյ, ի Վենետիկոյ, ի Մոսկովոյ և ի Ֆրիւմենկաց, նաև բերեն զբաղում կենդանիս զեղինս, զօշխարս և զարջառս, զերիվարս կամ զգրաստս և այլ սոյն զոնկաւ, որք լինին ընդամենն անկի քան զվաթսուն հազար»⁹։

Լվովը, ինչպէս վկայում է Սիմեոն Լեւոնցին, է «իրեք արքեպիսկոպոսաց աթոռ՝ Լիհա, Ըգդաց և Հայոց»¹⁰։

Սիմեոն Լեւոնցին, թեև մի փոքր ընդհանուր ձևով խոսում է նաև Լվովի բնակչութիւնը ազգային կազմի մասին։ Բացի 130 տուն հայերից, ապրում են լեհեր, ռուսներ, ուկրաինացիներ, որոնց հեղինակը ռուսներ է համարում. «Եւ Լիհքն հն լաւ քրիստոնեայք, բայց Ռուսն շատ է քան զԼիհ, տասնապատիկ, որ են իոմի դաւանութեամբ և Ստամպօլայ պատրիարքին թապի, և Լիհք՝ Փափին։ Բայց հերձուածողքն բազում են և ազգ և ազգ, զոր Լութեր կոչեն... և այս աշխարհս բնաւ հոռում չկայ, միայն Լով՝ երկու իրեք տուն հոռում»¹¹։

Հեղինակի աչքից չի վրիպել նաև Լվովի շէնքերի արտաքին տեսքը. «Եւ քաղքին տներն ամէն քարաշէն, մեծածախ և վիմաշէն, կոփածու, լայն և բարձր իրեք, շորս դաքաղայ։ Եւ զետեափոր մաղարանի, բիվնիցանի բարձ, որ ամառն բմպելին ցուրտ և պաղ լինի։ Ամէն

³ «Սիմեոն Դպիր Լեւոնցու ուղեգրութիւն», ր. ն. Ակինյան, Վիեննա, 1936, էջ 339։

⁴ «Կամենից», էջ 5, 216. Նման նաև, էջ 215։ 13-րդ դարի հեղինակ Վարդան Արեւելցու Աշխարհացոյցում հիշվում է Լվովի անունը («Աշխարհացոյց Վարդանայ վարդապետի», Երտ. 2. Պէրպլերան, Փարիզ, 1960, էջ 75), սակայն այդ տեղեկութիւնը թերևս ուշ շրջանի ավելացում լինի։

⁵ Նրեանի Մատենադարան, ձև. № 1004, էջ 155բ։

տուն ԲՈ (2000), ԳՈ (3000), ԴՈ (4000) դուուդի¹²։ Այստեղ կարելի է նշել նաև այն գովեստը, որ հայ հեղինակները տալիս են լվովում, Կամենիցում և սրանց շրջակա գյուղերում պատրաստվող զարեչրին։ Օրինակ, 1704 թ. Հակոբ Բաղդասարյանը շվեդների ձեռքից փախչելով լվովից մի կերպ հասնում է Կամենիցի մոտերքում գտնվող խառնիվ գյուղը և հյուրընկալվում ոմն Ֆեոդորի տանը։ Վերջինս մեր հեղինակին հյուրասիրում է ուտելիքներ և բժշկիչներ, ապա նաև. «Ջղարեչուր ասին յոյժ, զորպիսի ի Լեուպոսոյ, ցարս ոչ ուրեք տեսի... գրում է հեղինակը¹³։

Սիմեոն Լեհացին խոսելով լվովի հարուստների, սրանց թվում նաև հայերի, «ենեցվածքի մասին շեշտում է քաղաքի բարեկարգ և կանաչապատ լինելը. «Ունին մուլքեր, պաղ ու պաղչանի, պողատու ծառեր, պարտիզր, բուրաստան, ծաղկաստան և վարդենիք. այլ և բարձր սարայք, դարպասին և աղբերը յորդարովսք. և լինէր մէջն մեծ և լայն, լի ձկամար. զոր ոմանք և աշտարակք և սարայնի ունին ի վերայ ջրոյն զարմանաշէն։ ...Ջանդակատուն մեծ և բարձր նման Այասոֆու և նրուսաղւմայ, և մեծամեծ գանկակք»¹⁴։ Ի դեպ, Հակոբ Բաղդասարյանի օրագրության մի վկայությունից իմանում ենք, որ լվովի մոտակայքում եղել է մի լիճ Բողդանովկա անունով¹⁵, որն այժմ չորացած է և նրա տեղիտորիան կազմում է լվովի հյուսիսարևմտյան արվարձանը։

Լվովի, Կամենիցի և ուկրաինական մյուս քաղաքների մասին հայկական աղբյուրներում եղած մնացած տեղեկությունները բազմաթիվանդակ են և իրենց բնույթով տարբեր։ Տեղեկություններ կան բնական պատահարների՝ հեղեղ, երկրաշարժ, երաշտ, համաճարակ, մահաբաժան, օտարերկրյա զավթիչների ասպատակությունների ու ավերումների, շինարարական աշխատանքների և հրդեհների, առևտրական գործարքների մասին, ինչպես նաև քաղաքական առանձին գործիչների վերաբերյալ ժամանակագրական տվյալներ։ Ըստ երևույթին մի հոգվածով դժվար է սպասել քաղաքների ներքին կյանքի մասին եղած տեղեկությունների հազորումը։ Այստեղ զրանցից կառանձնացնենք այնպիսիները, որոնք առավելապես բնորոշ են և հետաքրքիր։

Հովհաննես Ավագերեցի և Սիմեոն Լեհացու ժամանակագրությունների մեջ մի շարք տարեթվերի՝ 1547, 1548, 1566, 1589, 1623, 1652 և այլն ներքո տրված են համաճարակների և մահաբաժանների մասին տեղեկություններ, օրինակ, 1566 թ. հուլիսի 15-ի ներքո Հովհաննես Ավագերեցի գրում է. «...եղա... Կամենից քաղաքիս, մեծ և անողորմելի ցասում՝ մահու, ոչ թէ միայն ի վերայ մանկանց տղայոց, այլ ի վերայ երիտասարդաց և ծերոց, զբամենայն օր ի մէջ Հայոց ազգիս ութ և ինն և մինչև ի տասն հոգի ի հողն թաղեակ. և այս երկարեցաւ ի յուրիս ամսոյ մինչև հոկտեմբեր։ Եւ այլազգիքն Ֆեոդոր և Ընդիկ՝ ամենայն օրն մինչև ի 60 հոգի թաղելով ի հող զնէին։ Եւ զի իր դասն և զժար ժամանակ, զի ոչ որ ի քաղաքս ոչ գայր, և բնաւ ի քաղաքացոյն զոր ուրեք շէին թողուլ»¹⁶։ Նույն հեղինակը 1547 թ. սեպտեմբերի 10-ից սկսված մահաբաժանի մասին խոսելիս, նշում է «Ֆրանգզ և «բրուզ» ազգերի մեծ կորուստը¹⁷։ Այս վկայության մեջ հետաքրքիրն այն է, որ ձեռնամուխ լինելով արտականիսի միջոցառման, քաղաքը հայտարարել են փակ գոտի և արգելել քաղաքացիների ելումուտը։

Ուկրաինական քաղաքների համար մի կատարյալ դժբախտություն էին տարերայնորեն ծագած հրդեհները, որոնք երբեմն ոչնչացնում էին առանձին թաղամասեր կամ քաղաքի զգալի մասը և պատճառում նյութական մեծ վնասներ։ 1552 թ. մարտի 10-ին Կամենիցում հրդեհի ժամանակ այրվել է 16 կրպակ և հայի յոթ տուն¹⁸, դարձյալ Կամենիցում 1602 թ. օգոստոսի 16-ին «Բովանդակ և ամենայն քաղաքն հրկիզ այրեցաւ... եթէ խանութներ, եթէ տներ մեծագոյնք և եթէ սրկերներ ամենայն բարութեամբ, որչափ ինչ որ ունէր բովանդակ այրեցաւ»¹⁹, Սիմեոն Լեհացին բավական մանրամասն գրում է 1623 թ. օգոստոսի 16-ի լվովի պարսպից դուրս ծագած հրդեհի և նրա պատճառած վնասների մասին²⁰, իսկ 1627 թ. օգոս-

¹² Նույն տեղում, էջ 337։

¹³ «Կամենից», էջ 159։

¹⁴ «Ուղեգրություն», էջ 338—339։

¹⁵ «Կամենից», էջ 149։

¹⁶ Նույն տեղում, էջ 36։

¹⁷ Նույն տեղում, էջ 18։

¹⁸ Նույն տեղում, էջ 19։

¹⁹ Նույն տեղում, էջ 63—64։

²⁰ «Ուղեգրություն», էջ 354։

տոսի 15-ին, տոնավաճառի ժամանակ, Յարոսլավում տեղի ունեցած հրդեհի նկարագրությունից, ուր թվում է այրված արհեստանոցների և առևտրական խանութների տեսակները, երևում է, որ Յարոսլավյ ըրադը ևս չանդիսացել է առևտրական և արհեստագործության խոշոր կենտրոն: Այս վնասը մի դեպքում հեղինակը գնահատում է ռժն (15) Մսրայ խազնայի լափա²¹, մի այլ դեպքում ռոնթերի մի խազնա²², եվ այդ վնասը կրեցին ոչ միայն յարոսլավցիները, այլև ռէհացոց, Մոսքովցոց, Թուրքի մարդկանց, Ֆոանկաց, Մաճրաց, Օլախա, Խզրլսլաշոց²³ և ուրիշ երկրներից եկած առևտրականները²⁴: Այս ոչ լրիվ ջանկար մոտավորապես կարող է տալ Յարոսլավյի առևտրական կապերի մասին:

Մի քանի այլ վկայություններով իմանում ենք բնական այլ պատահարների և անսովոր երևույթների մասին, օրինակ, 1536 թ. Կամեննիցում ուժեղ քամու հետևանքով կործանվել է 133 տուն²⁵: 1602 թ. ձմռանը՝ փետրվարի 25-ին, Կամեննիցում երկինքը որոտաց, առաջացնելով բնակչության զարմանք²⁶, իսկ 1547 թ. Կամեննից քաղաքին ջուր կանաչ դարձաւ²⁷, որը դիտվում էր, որպես նույն թվի աշնանը սկսված մահտարածամի շար նշան:

Հովհաննես Ավագերեցի իր ժամանակագրության մեջ ամսաթվերի ճշտությամբ արձանագրել է 1536, 1564, 1590, 1605, 1606 թվականներին տեղի ունեցած երկրաշարժները²⁸, նույն հեղինակը մի շարք վկայություններ է տալիս Կամեննիցում պարբերաբար կրկնվող հեղեղների մասին (1444, 1545, 1571, 1579, 1587, 1595, 1598 թվականներին²⁹ և այլն), ուր նշված են քաղաքին պատճառած բազմաթիվ վնասներ: Վկայություններից երկուսում գրված է. «1571 թ. փետրվարի 6, օրն երկուշաբթի... ի Կամեննիցս... մեծ գետայարուց եղև... զքաղաքներն աւերեց և զկարմունքներն տարաւ և զղեղաճեց ճացի (համարք ցորենոց) և խափ շատ տարաւ և բազում պակասութիւն արաւ քաղաքս և ամենեցուն³⁰... կամ 1595 թ. մարտի 8 մեծ դետայարուց եղև ի Կամեննից քաղաք, եւ մեծ պակաս արաւ քաղաքին, զդրունսն կոտորելով զերկուսին. և մեծ պակասութիւն հասոյց ամենայն որպիսութեանց, թէ շինուածոց և քէ կաւերաց և քէ աճաւոց՝ և ամենայն ընչիցս³¹: Ընդգծված հատվածները մեզ եզրակացնել են տալիս, որ Կամեննիցը տակավին 16—17-րդ դարերում շարունակում էր մնալ որպես ագրարային քաղաք, ի տարբերություն Լվովի և Յարոսլավյի, և նրա բնակիչների զգալի մասը զբաղվում էր գյուղատնտեսությամբ: Այս պատահարները ազդել են ապրանքների շուկայական գների վրա և թանկացրել դրանք: 1598 թ. Կամեննիցում հեղեղը մեծ վնաս հասցնելով քաղաքին՝ ժառանգեց ոչ գտանելի³²: Հեղինակը շարունակության մեջ գրում է մի քանի ապրանքների գների մասին. «Յամենայն ինչ մէկ քին հինգ վեց քին եղև է, եթէ հաց և եթէ միս, եթէ ըմպելի և ամենայն ցեղ կերակուր. մէկ շարեկ միս՝ եթէ եղև և եթէ կովու՝ շոր: մաճրի եղև է, զոր յառաջ 20 սպիտակ կառնուաք ու թանկ կու հաշուաք. և մէկ ոչխարի շարեկ՝ 15 սպիտակ եղև է, զոր յառաջ 3 սպիտակ էրա³³: նման տեղեկություններ կան Կամեննիցի մասին 1590 թ. մեծ երաշտի ժամանակ. 1590 թ. ...մեծ երաշտ եղաւ, որ ընաւ անձև շեկաւ մինչև ի բուն ամառն. և սերմանիքն և բոյսքն շորացան, վասն այն պատճառին մեծ սով և թանկութիւն եղաւ. զի ցորենոյ կապիճ տասն մաճրի (ոսկի)՝ եղաւ և սուլուն՝ 8 մաճրի, և տուկուն՝ 10 մաճրի, և կորեկն՝ 8 մաճրի, և ուվուն՝ 4 մաճրի, զոր բնաւ տեսեալ չէր և ոչ լուեալ³⁴: Իսկ հաջորդ տարին հուլիսի 6-ին Այս սովոյս ժամանակն ի միում աւուր յառաւտտո՝ իննական սօմ Միխնոյ երեսփոխանն սուլու ծախեց, և մինչև ի հաշք շորսական սօմ եղև ի նոյն օրն³⁵:

21 «Ուղեգրութիւն», էջ 381:

22 նույն տեղում:

23 նույն տեղում:

24 «Կամեննից», էջ 17:

25 նույն տեղում, էջ 18, տե՛ս նաև էջ 74:

26 նույն տեղում, էջ 18:

27 նույն տեղում, էջ 17, 35, 57, 66:

28 նույն տեղում, էջ 17, 39, 50, 55, 59, 62:

29 նույն տեղում, էջ 39:

30 նույն տեղում, էջ 59:

31 նույն տեղում, էջ 62:

32 նույն տեղում:

33 նույն տեղում, էջ 57:

34 նույն տեղում: 1579, 1611, 1612 թթ. ներքո նշված են մի քանի վկայություններ մուխիսի պատճառած վնասների մասին, էջ 51, 69, 72 և այլն:

Շինարարական աշխատանքների մասին տեղեկություններ քիչ ունենք, եթե չհաշվենք եկեղեցիների և օժանդակ օբյեկտների կառուցման կամ վերանորոգման մասին եղածը, ապա 1560 թ. ներքո կարդում ենք. «Ի Կամենից քաղաքս զժամացոյցն, որ կոչի սահաթ, նորեցին և մեծագոյն շինեցին»³⁵, 1567 թ. Կամենիցի քարն պարիսպը կառուցվեց քաղաքացիների ուժերով. «Բայց բազմաց հաճոյ չթվեցաւ. քանզի մեծ և ծանր գործ սկսան. և զի զքաղաքացիսն յոյժ նեղելով բանեցնէին. և նորա անմոռնչ յոգւոց հանելով զործէին զգործն զայն»³⁶:

Մի այլ վկայությամբ իմանում ենք, որ 1570 թ. լեհական թագավոր Սիգիզմունդ 2-րդը խռովել է Կամենից քաղաքի բնակիչներից և տամղան որ առաջ չէր վերցնում սրանցից, կարողարել է հիմա վերցնել³⁷, Թե ինչ է. Լեւել այս անախորժության պատճառը, հայ աղբյուրները չունեն:

Առանձին եկեղեցական և քաղաքական զործիչների մասին կան ժամանակագրական ճիշտ վկայություններ, օրինակ, 1570 թ. հոկտեմբերի 15-ին մահանում է Կամենիցի քաղաքագլուխը, որը այդ պաշտոնում մնացել էր 28 տարի³⁸, Իսկ նույն թվականի դեկտեմբերի 21-ին քաղաքի ղեկավար է կարգվում պան Բատոցկին³⁹, նման վկայություններ կան ուրիշների մասին:

Ի դեպ տեղին է հիշել, որ մեր աղբյուրները հայ, ռուս և լեհ եկեղեցական համայնքների մեջ թշնամանքի փաստեր չեն հաղորդում, ընդհակառակը, վերջիններս նշում են, որ նրանք կողք կողքի ապրել են հաշտ ու լավեցած արարաւ: Ահա թե ինչ է գրում Հովհաննես Ավագերեցը. «1561 թ. Իլովի արհիեպիսկոպոսն Գեօնց Թարլոյ եկաւ ի Կամենից. և մեր Հայոց քահանայքս գնացաք ի մօտն՝ ընծայիւք. և քան զչափն աւելի ընդունեց մեզ»⁴⁰: Հեղինակը խոսելով Կամենիցի եպիսկոպոս Գեօնց Տեուչ Սեյենովսի մահվան (1576 թ.) մասին գրում է. «էր հեզ և խոնարհ ոմն և պարզամիտ և երախտաւոր առ Հայոց ազգիս, միշտ ընդունելով զնոսա, ի սեղանս միշտ հացակից առնելով, և մեծարելով քան զչափն աւելի զեպիսկոպոսն մեր և զքահանայսն»⁴¹: Եղել է ավելին, 1547 թ. օգոստոսի 14-ին Կամենիցի լեհ եպիսկոպոսը գալիս է տեղի հայկական ս. Աստուածածնի եկեղեցին և երկու անգամ քարոզում այնտեղ⁴²: Ջերմ խոսքեր կան Հովհաննես Ավագերեցի ժամանակագրության մեջ Կամենիցի մեծ քաղաքացի, ապստամբ գյուղացիների ղեկավար Սեվերին Նալիվայկոյի մասին. «Նալիվայքո էր աղբաւտ տանէ այս քաղաքիս. և եղև գլուխ ի վերայ դադախներաց. բայց էր ինքն հմուտ կոռույ և բաշ պատերազմող»⁴³:

Տեղեկություններ համեմատաբար շատանում են առանձին քաղաքների վրա կատարված թուրք-թաթարական հարձակումների մասին: Այդ կապակցությամբ բնորոշ են հեղինակների կշտամբանքները իշխանների նկատմամբ, որոնք հանդես են բերում թուլասրտություն և եսասիրություն, պաշտպանելով միայն իրենց կալվածքները. «1568 թ. ...դեկտեմբերի Ի (20)... եկաւ դադարն, և բազում զօրօքն, զոր ոմանք ասին եթէ 40,000, և եմուտ ի գաւառն Բոտոլսին, և զամենայն գաւառն և քաղաքն և զգիւղն աւարեց և գերի տարաւ, և զամենայն բարութիւն, զոչխար և զարջառն և զամենայն հացն և ստացուածն հրկիզ արարաւ: Եւ զի երկու շաբաթ շրջեցան անօրէնքն ի երկիրս այս, և ոչ ոք ի նոցանէ կորեաւ. քանզի մեր (լեհաց—Վ. Հ.) իշխանքն և մեծամեծքն թուլասիրտ են դարձել և ձեռքն լրեալ և ծունկքն կթոցեալք, մանաւանդ յուտել և ի ռմպել և արբենալ, և զմիմեանս սպանանել և զազրագործելն՝ պատրաստագոյն են, քան զթշնամիսն հալածել և կամ կոտորել»⁴⁴: Ահա սա է ֆեոդալական հայրենասիրությունը: Ուկրաինայի տարբեր քաղաքների վրա կատարած թուրք-թաթարական արշավանքներից կարելի է նշել 1578 թ. ձմռանը Օստրոկի վրա կատարած արշավանքը: Շրջակա գյուղերը հրկիզելուց, ավարի ենթարկելուց և բնակիչներին սրի քաշելուց հետո, թաթարները

35 «Կամենից», էջ 19:

36 Նույն տեղում, էջ 38:

37 Նույն տեղում, էջ 39:

38 Նույն տեղում:

39 Նույն տեղում:

40 Նույն տեղում, էջ 29:

41 Նույն տեղում, էջ 47:

42 Նույն տեղում, էջ 17, տե՛ս նաև 38—39:

43 Նույն տեղում, էջ 61:

44 Նույն տեղում, էջ 37—38, հմտ. նաև էջ 46—47, 57, 58:

նույնը կրկնում են Օստրոկում. «Քաղաքն այրեց բովանդակ, և զամենայն բարութիւնս էառ»⁴⁵։ Այս ավերումից ազատվեց միայն Օստրոկի բերդը և նրանում պատսպարված ընակչությունը։ Նման վկայության հանդիպում ենք Սնյատինի մասին. «1589 թ. օգոստոսի. եկաւ ան տաճիկ ազգն և Սնեադին քաղաքս հրկիւզ արաւ, և քաղում վնաս գործեց, և անթիւ մալ և խազնա տաւաւ. զմարդիկ ի սուր մաշեց և զայլսն գերի տարաւ...»⁴⁶։ Այսպիսի տեղեկություններ կան տարբեր տարեթվերի ներքո՝ Նաև Լվովի, Կամենիցի, Լուցկի, Օրշայի, Բելայա-Ցերկովի, Գորոտչինայի, Յարոսլավլի մասին։ Ահա այդ տեղեկություններից մեկը. «1575 թ. հոկտեմբերի 12, օրն երեքշաբթի, Կամենից քաղաքն թաթար եկաւ. և շուրջ դքադարան շրջեցան ամբարիշտքն. և զամենայն գեղանսն այրեցին հրով, զՏօլշքան և զՆովոսելիցան և զԴօպոլովն. ...զուրկ իսկոյն եկել էին բերդին ներքև և շուրջ զլեւամբք ասպատակեալք, և ի մէջ քաղաքին նետաձիգ լինէին, անահ և անեւկիւղ շրջելով։ Ջոր էին հասեալ մինչև յԲլովն. և հազիւ ազատեցաւ քաղաքն. զի թէ թօրերով շրջողիմանային ընդդէմ նոցա, այլև յԲլովին յետ անցել էին, շուրջ զգաւառան զամենայն ինչ հրով այրեցին»⁴⁷։

Հայկական աղբյուրներում պահպանվել են երկու տարբեր հեղինակներից ընդարձակ տեղեկություններ 1672—1673 թթ. Ուկրաինայի տերիտորիայում թուրքական նոր արշավանքի մասին։ Այդ արշավանքը կապված Կամենիցի պատմության հետ բավական մանրամասն նկարագրված է Սեցինսկու գրքում⁴⁸, բայց այն, ինչ տալիս են հայկական աղբյուրները, վերահիշյալ գրքում չենք գտնում և հետաքրքիր են իրենց մանրամասնությունների մեջ։ Այդ աղբյուրներից մեկը Կամենիցի գրավման վերաբերյալ, Կամենիցի բնակիչ Անանուն հեղինակի փոքրիկ պատմությունն է, որը գտնվում է Նրեանի Մատենադարանի № 2561 ձեռագրի 195 և և ընդհանուր, իսկ մյուսը 1673 թ. Վարշավայում ընդօրինակված մի ձեռագրի հիշատակարանը⁴⁹, որը գրել է Գրիգոր Ոսկերիչը։ Հիշատակարանի հեղինակը ականատես է եղել Լվովի պաշարմանը և ապա գաղթել Վարշավա։ Այս երկու հեղինակներն էլ դեպքերին ականատես անձնավորություններ են։

Նախ, պատմության հեղինակի համար բնորոշ է ոչ բարիացական վերաբերմունքը դեպի լեհական թագավոր Միխայիլ Կորիբուտը, նրան բնութագրելով «սնապարծ և զոռոգարան»⁵⁰, որը «ոչ կարաց ըզդէմ ունել, այլ ետ խոյս և թաղեալ յանկեան ուրեք, թողելով գրուն աշխարհի իւր թշնամեացն ապաստան»⁵¹։ Մեր հեղինակը չխոսելով Կամենիցի պաշարման և գրավման մանրամասնությունների մասին, դրում է, որ թուրքերը Կամենիցի շրջակայքը գրավելուց հետո «սուր ի վերա եղեալ զոմանս կոտորեցին և զոմանս գերեցին՝ զարս և զկանայս և զմանկունս մատաղս. և զթիւ գերելոցն 100.000 ասացին զյայտնի»⁵²։ Կամենիցի գրավումը մեր հեղինակը նշում է 1672 թ. օգոստոսին⁵³, չնչնով ամսաթիվը, իսկ վերևում նշված հիշատակարանում Կամենիցի գրավումը նշված է օգոստոսի 16-ին⁵⁴։ Դա միանգամայն ստույգ է, որովհետև թուրքերը Կամենիցի պաշարումն սկսեցին օգոստոսի 8-ին և 9 օր հետո գրավեցին՝ նույն ամսի 16-ին⁵⁵։ Պատմության հեղինակը նշում է, որ թուրքական սուլթանը կարող էր գրավել բազմաթիվ քաղաքներ, «բայց կայսրն ոչ հաճեալ զայլսն, միայն զԿամենիցն առեալ և զայլսն տուեալ յաղաղ»⁵⁶։ Հարկին, որ հնազանդեցան Լեհիցի տալ 40.000 ոսկի ամ յամէ թագաւորին, այլև 50.000 ուլյար»⁵⁶։ Այնուհետև, ինչպես հաղորդում է հիշատակարանի հեղինակ Գրիգոր Ոսկերիչը,

⁴⁵ Նույն տեղում, էջ 50։

⁴⁶ Նույն տեղում, էջ 57։

⁴⁷ Նույն տեղում, էջ 46։

⁴⁸ «Город Каменец-Подольский, историческое описание священника Е. Сецинского», Киев, 1895, стр. 31—47.

⁴⁹ Այս հիշատակարանը նախ հրատարակվել է Գ. Գալեմբերյանի «Յուդակ հայերէն ձեռագրաց արքունի Մատենադարանին ի Միւնխեն, Վիեննա, 1892, էջ 22—23, ապա Ալիշանի «Կամենից» ժողովածուում, էջ 194—195։

⁵⁰ № 2561, էջ 195ա։

⁵¹ Նույն տեղում։

⁵² Նույն տեղում։

⁵³ Նույն տեղում։

⁵⁴ «Կամենից», էջ 194, Յուդակ հայերէն ձեռագրաց արքունի Մատենադարանի ի Միւնխեն, էջ 22։

⁵⁵ Е. Сецинский, Город Каменец-Подольск, стр. 33—34.

⁵⁶ № 2561, էջ 195ա։

Կամենիցը գրավելուց հինգ օր⁵⁷ հետո, թուրքերը արշավում են և պաշարում Լվովը: Ահա թե ինչպես է նկարագրում նա այդ պաշարումը. «Եթ օր և ևս չիշեր պատերազմեցաւ Թուրքացի ազգն և քաղաքացիքն ի հետ միմեանց, մին օրն և մին գիշերն հինգ վեց հարիւր թօփ քաշեցին առ միմեանս, թող թէ զանհամար թուֆանկն⁵⁸, Թուրքերը շկարողանալով նվաճել Լվովս համաձայնվում են 80.000 ղուրուշ ստանալ քաղաքացիներից և վերացնել Լվովի պաշարումը: Իսկ մինչ գումարի ստացումը թուրքական ղոբրի հրամանատար Ղափյան փաշան պատանդ վերցրեց Լվովի բնակիչներից 8 հոգի: «Այն ութ հոգին էր՝ երկուքն Լեհ, երկուքն Հայ, երկուքն Ըռուս և երկուքն այլ Հրեայն⁵⁹: Այս վկայությունը ցույց է տալիս Լվովի բնակչության հիմնական ազգությունները: Այնուհետև Գրիգոր Ոսկերիչը նշում է, բանի որ թուրքերի Լվով արշավելը կրկին սպասվում էր, ուստի քաղաքի բնակչության սկզբնական կամ թէ այլ անելի փախստական եղանակ⁶⁰, և զնացին ոմանք Կրակով, ոմանք Դանցիկ, ոմանք էլ Վարշավա, ինչպես մեր հեղինակը:

Հաջորդ տարին՝ 1673 թ., ինչպես գրում է պատմության հեղինակը, «ընդվզեալ Լեհացիք ոչ հնազանդեցան տալ հարկս Օսմանցոց, վասն որոյ... կայսրն առաքլ զօրս քաղումս ի վերա աշխարհին Լեհաց միանգամ և երկիցս և երկիցս⁶¹... որի ժամանակ ահադին տերիտորիաները ոտնակոխ արվեց և վերջում թուրքերը նորից հաստատվեցին: Այդ պատճառով էլ հաղթողի ձեռքում մնաց բազմաթիվ քաղաքներ և բերդեր՝ Պար, Ուման, Իժմպոօ և Զպարաշ անուն և զայս ոմանս⁶²: Հետաքրքիր է պատմության վերջում հեղինակի դատողությունը. «Թուրքերը երբ նորից հաստատում են իրենց ժամանակավոր տիրապետությունը Ուկրաինայի որոշ քաղաքներում, նրանք թեթևացնում են բնակիչներից գանձվող հարկը: Հեղինակը թուրքերի այլ միջոցառումը որակում է կեղծավորություն և նշում է դրա բուն նպատակը. «Եթ այնք որ ի ձեռս Լեհացոց բռնաւորաց ենդին, դայցեն ի սոցա (իմա թուրքերի—Վ. Հ.) կողմն և խնոս սակաւ սակաւ որսայցեն ղոբողովորդ աշխարհին Լեհաց և հարստացուցեն զբաժին մասի՝ Իրենանց⁶³: Սակայն թուրքերը այդ բանում հաջողության չեն հասնում. «Ոչ բարեք նուաճին Թուրք ընդ ձեռամբ Թուրք բռնաւորաց և խորշին ի նոցանէս⁶⁴, որովհետև, ինչպես գրում է հեղինակը, «Յաղագս այլադաւան գոլոյն նոցա ի քրիստոնէական կրօնից և հաւատոց⁶⁵: Դրանից հետո, որպեսզի կարողանան ուկրաինացիներին իրենց կողմը թեքել, թուրքերը «երեւել զՊոլտանա (իմա Մոլդավիայի—Վ. Հ.) պարոնն սահմանեցին լինել նոցա հաթման և զամենայն հասս և ղիրաւունս նոցա նորին ձեռամբ հաւաքեսցեն. և էր անուն պարոնին Տուգա⁶⁶: Այս վկայությամբ էլ պատմության հեղինակը ավարտում է իր աշխատությունը:

Մեր աղբյուրներում պահվել է մի վկայություն Կամենիցի բնակարանային վարձի պայմանների մասին: Ահա այդ վկայությունն ամբողջությամբ. «Նագուպ Խայիմ շուտին տվի քարէտուն քրդայով, պիղտի տուն վերի, 18 զոլթի, Լեհու ս. Մարշինին մինչև ի գատիկ, թվյոյ ՌՃԱ (1652) նոյեմբերի Գ (3), օրն շորեքշափտի. պարոնի հիմի 9 զոլթին տալ. 9 զոլթին մնաց լոյվու եւրամարքի պիտի տալ⁶⁷: 1652 թ. նոյեմբերի 3-ից մինչև հաջորդ տարվա՝ 1653 թ. գատիկը (ապրիլի 10) կլինի վեց ամիս մի քանի օր: Ուրեմն բնակարանի վարձը ամսական կադմել է 3 զոլթի. մյուս կողմից ամբողջ վարձի կեսը տան տերը ստացել է սկզբից. իսկ մնացած կեսը՝ զարնանը: Այս տեղեկությունը հետաքրքիր է բնակավարձի շափը իմանալու համար:

18-րդ դարի սկզբներին Շվեդիայի թագավոր Կարլոս XII բանակները ասպատակելով Ուկրաինայի տերիտորիան՝ հասնում են Լվով և պաշարում այն: Հակոբ Բաղդասարյանը, որպես

57 «Կամենից», էջ 194: Գալեմբարյանը հրատարակած բնագրում նշված է 40 օր (տե՛ս Ցուցակ, էջ 22). մեզ հավանական թվում է Ալիշանի հրատարակած բնագրի վկայությունը:

58 «Կամենից», էջ 194, Ցուցակ, էջ 22:

59 Նույն տեղում, էջ 194, «Ցուցակ», էջ 22:

60 Նույն տեղում, էջ 194, «Ցուցակ», էջ 22:

61 № 2561, էջ 195ր:

62 Նույն տեղում:

63 № 2561, էջ 195ր:

64 Նույն տեղում:

65 Նույն տեղում:

66 Նույն տեղում, էջ 195ր: Խոսքը վերաբերում է Դուկա Վոդկին, որը իր ղորքով, 1683 թ. մասնակցեց Վիեննայի պաշարմանը և ջախջախվեց Ցան Սորենկու կողմից:

67 «Կամենից», էջ 112:

ականատես նկարագրում է այդ դեպքերը և իր փախուստը: Նա հաղորդում է, որ քաղաքացիները ոչ միայն հրաժարվեցին շվեդների պահանջած հարկը վճարել, այլև նրանց թույլ չտվեցին քաղաք մտնել, այսինքն կազմակերպել են դիմադրություն: Սակայն, այդ դիմադրությունը երկար չի տևում, որովհետև 1704 թ. սեպտեմբերի 6-ին, շաքաթ լույս կիրակի, շվեդները մատնություն գրավում են քաղաքը⁶⁸. «Սպանին զանձինս 180, որք յառաջնում դիմմանն պատահեցան նոցա»⁶⁹, որից հետո սկսվում է քաղաքի ավարատությունը, ինչպես Ստեփանոս Ռոշբան է հաղորդում, այն տևում է երեք ժամ, այնուհետև «զղորմամ 200.000 դալնացի քաղաքացիներից, յարեպիսկոպոսացն և յամենայն եկեղեցեաց բոնութեամբ առին»⁷⁰:

Ավելի ուշ շրջանի՝ 19-րդ դարի սկզբի վերաբերյալ ուկրաինական մի շարք քաղաքների մասին տեղեկություններ հաղորդում է Վենետիկի Մխիթարյան ուխտի միաբան Մինաս Բժշկյանը ճանապարհորդական իր նոթերում⁷¹: Բժշկյանը շրջել է Հնաստանի, Ուկրաինայի, Մոլդովիայի, Վալախիայի, Ղրիմի հայերով բնակեցված քաղաքները: Նրա տեղեկությունները գերազանցապես վերաբերում են հայերին և նրանց գործունեությանը, սակայն, դրա հետ մեկտեղ, նա տալիս է առանձին տեղեկություններ նաև տվյալ քաղաքների մասին: Լվովի վերաբերյալ խոսելիս նա գրում է. «Այս քաղաք է գեղեցիկ և զարդարուն, մեծ և փառալուր, աթոռանիստ մեծի կուսակալութեան գերմանացուց. առ որով անցանել Բելգի վտակ. և բաժանել զքաղաքն յարուարձանն: Ուր գոն պայծառ եկեղեցիք, հուշակալուր համալսարանք և դպրոցք, ուսումնարանք ազատական արուեստից, երեք արքեպիսկոպոսարանք և զանազան շինուածք և ապարանք: Բացի ի կուսակալ մեծ իշխանն է նստին անդ երեք արքեպիսկոպոսք՝ Լատին, Հայ և Ռուսներ, անկախ յիբերացա»⁷²: Նկարագրելով լատին եկեղեցիները, քաղաքի բնակչությունն սասին գրում է. «Այժմեան ժողովուրդը իլովայ ըստ մեծի մասին են Հրկայք, որք յափշտակեալ են զվաճառականութիւնս հայոց և ունին կրկին սինակոկալս: Գտանին յուս՝ յամենայն ազգաց եւրոպացուց, այլ գլխաւորք են Լէհք բուն տեղացիք և Ռուսք կամ Ռուսներ, և Հայք. ընդ ամենայն լինին 30.000, թող զգերմանացիս, գիտալացիս և այլն»⁷³:

1820 թ. հուլիսի 4-ին դուրս գալով Լվովից, Բժշկյանը անցնում է Գալիշով և հասնում Ստանիսլավ. «Եկեղեցիկ և քարեկարգ մայրաքաղաք Բեքուցիս. գաւառին շինեալ յընդարձակ դաշտի անդ, հեռի յիլովի իբր 15 մղոնա...: Ի սկզբան անդ պարսպապատ էր քաղաքս և զարդարեալ մարմարիտնաշէն մահարձանօք և գեղեցիկ դամբը...: Ի է քաղաքս վեղեցիկ և քարաշէն շինուածովք, ունի 5 եկեղեցիս քարաշէնս...: Գեղեցիկ է հրապարակ քաղաքիս զարդարեալ քարաշէն կոպկօք: Երեւելի է խորհրդարանն և դատարանն ևս և պալատք մեծամեծաց և քարձր տուն, որք են քարաշէն և կրկնայարկ առ հասարակ»⁷⁴: Լիպցա կամ Լըշեց գյուղաքաղաքի մասին Բժշկյանը գրում է. «Ամենայն շինուածք են փայտակերտ, իսկ բնակիչք ընդ ամենայն 2000»⁷⁵: Հեղինակը սրա մասին ուրիշ բան չի գրում, որովհետև «Աստ ոչ տեսաք գերեւելի ինչ»⁷⁶: Եվ այսպես մի դեպքում մանրամասն, մի այլ դեպքում համառոտ հեղինակը տալիս է Պերնոյի, Դիսմինից, Սենտիին, Գորոգենքա, Յազլովից, Լուցք, Կամենից, Մայով քաղաքների մասին ընդհանուր տեղեկություններ:

Իհարկե, այս հարցերին վերաբերող նյութերը մենք չենք սպասել, տուկավին կան աղբյուրներ, որոնք դեռ հրատարակված չեն, դրանք մեծ մասամբ 16—19-րդ դարերի ձեռագրերի հիշատակարաններն են: Բոլոր նյութերն ուսումնասիրելուց հետո կարելի կլինի այս հարցի մասին ավելի հանգամանորեն խոսել: Սակայն, այստեղ բերված նյութերն էլ բավական են ցույց տալու համար, որ հայ մատենագրության մեջ եղած տեղեկությունները ուկրաինացիների, ռուսների և այլ ժողովուրդների պատմության վերաբերյալ կարող են հետաքրքրության առարկա դառնալ մասնավորապես մեր օրերում, երբ այնքան արդիական է հնչում սոցիալիստական ազգերի ոչ միայն եղբայրության գաղափարը, այլև իսկական եղբայրությունը:

⁶⁸ «Կամենից», էջ 147, հմտ. Ստեփան Ռոշբանի մի այլ վկայության հետ, տե՛ս նույն տեղում, էջ 146:

⁶⁹ Նույն տեղում, էջ 147:

⁷⁰ Նույն տեղում, էջ 146:

⁷¹ «Ճանապարհորդութիւն ի Հնաստան...», Վենետիկ, 1830 թ.:

⁷² «Ճանապարհորդութիւն», էջ 95:

⁷³ Նույն տեղում, էջ 96:

⁷⁴ Նույն տեղում, էջ 120:

⁷⁵ Նույն տեղում, էջ 123:

⁷⁶ Նույն տեղում: